ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանի՝ Լիտվայի Հանրապետություն (Վիլնյուս) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Կարեն Անդրեասյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարար:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Լիտվայի Հանրապետություն (Վիլնյուս), 2022թ. մայիսի 25-ից 27-ը:

Հրավիրող կողմը՝ Լիտվայի Հանրապետության արդարադատության նախարար Էվելինա Դոբրովոլսկա:

Գործուղման նպատակը՝ Քննարկել երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

Քննարկված թեմաները՝ Էլեկտրոնային կառավարման և էլեկտրոնային արդարադատության (e-justice), խոսքի ազատության, մեդիայի, կեղծ լրատվության դեմ պայքարի ոլորտներում փորձի փոխանակմանը, քրեակատարողական, ոստիկանության, արդարադատության, ինչպես նաև քրեական, քաղաքացիական և ընտանեկան գործերով իրավական փոխօգնության բնագավառում համագործակցության խորացմանն առնչվող և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը Լիտվայի Հանրապետության արդարադատության նախարար Էվելինա Դոբրովոլսկայի հրավերով 2022թ. մայիսի 25-ից 27-ը աշխատանքային այցով գտնվել է Լիտվայի Հանրապետությունում (Վիլնյուս):

Վիլնյուս կատարած պաշտոնական այցի ընթացքում ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը հանդիպումներ է ունեցել Լիտվայի Հանրապետության արդարադատության նախարար Էվելինա Դոբրովոլսկայի, Ներքին գործերի նախարար Ագնե Բիլոտաիտեի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանի և Լիտվայի Հանրապետության արդարադատության նախարար Էվելինա Դոբրովոլսկայի միջև կայացած հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են երկու պետությունների էլեկտրոնային կառավարման և էլեկտրոնային արդարադատության (e-justice), խոսքի ազատության, մեդիայի, կեղծ լրատվության դեմ պայքարի ոլորտներում փորձի փոխանակմանը, քրեակատարողական, ոստիկանության, արդարադատության, ինչպես նաև քրեական, քաղաքացիական և ընտանեկան գործերով իրավական փոխօգնության բնագավառում համագործակցության խորացմանն առնչվող և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցեր:

Հանդիպման ավարտին երկու պետությունների արդարադատության նախարարները արդարադատության ոլորտում փոխգործակցությունը խորացնելու պայմանավորվածություն են ձեռք բերել:

ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանի ու Լիտվայի ներքին գործերի նախարար Ագնե Բիլոտաիտեի միջև տեղի ունեցած հանդիպման ընթացքում ՀՀ արդարադատության նախարարը Լիտվացի գործընկերոջը ներկայացրել է ներքին գործերի նախարարության ստեղծման գործընթացի վերաբերյալ մանրամասներ: Լիտվայի Հանրապետության ներքին գործերի նախարարը պատրաստակամություն է հայտնել աջակցել նախարարության և ոստիկանության միջև փոխգործակցությանը, ինչպես նաև ոստիկանության ոլորտի բարեփոխումների թեմայով փորձի փոխանակմանը: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են նաև պարեկային ծառայությանը վերաբերող և երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

ՀՀ արդարադատության նախարար

Recoverable Signature

X

Karen Andreasyan

Signed by: ANDREASYAN KAREN 2009770196

Կարեն Անդրեասյան

30.05.2022թ.